Հաստատում եմ՝ .....Ն.Հովհաննիսյան

< ՀՀ Վայոց ձոր մարզի Ագարակաձորի Ցուրա Խաչատրյանի անվան միջն.դպրոց>> ՊՈԱԿ

2022-2023 ուստարվա դասղեկի աշխատանքային ծրագիր

11-րդ դասարան

Դասղեկի ազգանունը,անունը

Մարգարիտ Մելքոնյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները 1. 11-րդ դասարանի ընդհանուր բնութագիրը:

11-րդ դասարանում սովորում են 11 աշակերտներ՝ 7 տղա և 4 աջիկ:
Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:

Ուշադրություն դարձնել աշակերտների պահվածքին, բարձրացնել վարվելակերպի և կուլտուրայի մակարդակը: Հետևել կարգապահությանը, թույլ չտալ անհարկի բացակայեն դասերից: Խստիվ հետևել, որ պահպանեն համաճարակային կանոնները և կատարեն դրանց վերաբերող հրահանգները: Ուշադիր լինել դպրոցական գույքի պահպանմանը, խնամքով վերաբերվել դասագրքերին: Ամեն ինչ անել ուսման մակարդակը բարձրացնելու համար:

1. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Մենք միշտ էլ կարևորել ենք եկեղեցու դերը մեր կյանքում, ուստի ուշադրություն դարձնել հոգևոր դաստարակությանը

Դա նպաստում է երեխաների և՛ հոգևոր, և՛ հայեցի դաստիարակությանը, նրանց մոտ առաջացնելով հարգանք դեպի մեր սրբավայրերը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների կյանքում պակաս կարևոր չէ գեղագիտական դաստիարակությունը: Նրանց մեջ սերմանել գեղեցիկը տեսնելու, զգալու կարողությունը: Այցելել թանգարաններ, կազմակերպել էքսկուրսիաներ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I Զրույց <<Ինչ է իրենից ներկայացնում կորոնավիրուսը>>:

II Եղիր ազնիվ ու ընկերներիդ հետ

III Ազատ և անկախ է իմ երկիրը

IV Ինչպես վաստակել մարդկանց վստահությունը

V Ով է իսկական ընկերը

VI Վատ սովորությունների հետևանքները

VII Ինչ է ինձ համար դպրոցը:

VIII Ներողամտությու՞ն թե՞ վրեժխնդրություն

IX Ի՞նչ է պատասխանատվության զգացումը

X Սիրո և հավատարմության մասին

XI Ինչպես եմ ինձ դրսևորել տարվա առաջին կիսամյակում

XII Հահդուրժողականություն

XIII Ինչ գիտեմ առողջ լինելու մասին

Հայրենիքը սկսվում է դպրոցից: Աշխատանք տանել երեխաների մեջ հայրենասիրական ոգի դաստիարակելու ուղղությամբ, սովորեցնել նրանց, որ հող հայրենին պետք է բարձր դասել ամեն ինչից, անգամ՝ կյանքից:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Մարդու ձևավորման համար շատ կարևոր դեր ունի ֆիզիկական դաստիարակությունը: Մարդը պետք է կոփի և մարմինը, և հոգին, լինի կոփված, տոկուն և հայրենիքին պիտանի:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Ինչպես մյուս, այնպես էլ աշխատանքային դաստիարակությունը շատ կարևոր է մարդու ձևավորման գործում: Աշխատանքի և աշխատասիրության շնորհիվ է մարդը հասնում նպատակներին և ձգտումներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Սովորեցնել սիրել բնությունը, պահպանել և խնամել ամեն թուփ ու ծառ: Սովորեցնել, որ ջարդելու և փչացնելու, հատելու փոխարեն պետք է տնկել, աճեցնել, խնամել:

4. Դպրոց-ընտանիք կապը

Մերտ կապի մեջ պահել դպրոց-ընտանիք կապը, որը միշտ էլ դրական ազդեցություն է ունենում աշակերտների ուսման բարձր որակի և հատկապես դաստիարակության և կարգապահության վրա:

XV Իմ ընտանիքը, որտեղ ապրում եմ ես

XVI Իմ կարողություններն ու ձեռքբերումները

XVII Կարողացիր ճանաչել և կառավարել քեզ

XVIII Ես սիրում եմ իմ երկիրը

XIX Հայտնի մարդկանց կյանքի պատմությունից:

XX Ինչպե՞ս հասնել հաջողությունների

XXI Ի՞նչ է խտրականությունը

XXII Աշակերտների իրավունքները և պարտականությունները:

XXIII Իմ բարի, իմ անուշ մայրիկ

XXIV Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը

XXV Արցախյան հերոսամարտիկները. ոչ ոք չի մոռացվել

XXVI Կարողանալ համապատասխանել Մարդ վեհ կոչմանը

XXVII Ընկերասիրության մասին

XXVIII ՄԱԿ-ը որպես միջազգային խաղարարար

XXIX Սովորիր լսել և ընդունել ճշմարտությունը

XXX Իմ սիրած առարկան և ուսուցիչը

XXXI Ի՞նչ եմ ակնկալում իմ ուսուցչից

XXXII Բոնությունը և դրա կանխարգելումը

XXXIII Անհանդուրժողականության հետևանքները

XXXIV Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում

Ամիսը մեկ անգամ հրավիրել ծնողական ժողով: Ամուր հիմքի վրա դնել աշակերտ-ծնող-դպրոց-ուսուցիչ կապը: Դասարանում ստեղծել ծնողխորհուրդ՝ բաղկացած 3 հոգուց, ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: